

ՊԱՌԱՏԻՍ ԳԵՏԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մ. Հ. ՃԵՎԱԶԻՐՃՅԱՆ

Միջնադարյան հեղինակների աշխարհագրական տեղեկություններից հայտնի է, որ Փոքր Հայքից սկիզբ առնող և Միջերկրական ծովը թափվող գետերից մեկը կոչվել է «Պառատիս» կամ «Պարատիս գետ»։ Պառատիս գետի տեղագրության մասին ճշգրիտ տեղեկություններ չեն պահպանվել։ Այս հոգվածում կաշխատենք լուսաբանել մինչև այժմ անստույգ մնացած Պառատիս գետի աղբի անվան հասցր։

Անանիա Շիրակացուն վերագրվող VII դարի «Աշխարհացոյցի» անհայտ հայ հեղինակը և միջնադարյան հայ տարեգիրներից Սամվել Անեցին, Սրմբատ սպարապետը, Մխիթար Այրիվանեցին, Հեթում Պատմիչը և տարբեր հեղինակներ նշել են Պառատիս գետի անունը։ Այդ մասին «Աշխարհացոյցում» գրված է.

«Յաղագս Երկրորդ Հայոց.

Աշխարհ Երկրորդ Հայք, որ արդ կոչին Երրորդ Հայք, յելից կալով Կիլիկիոյ առ Տաւրոս լեռամբ յերի Ամանոս լեռին, որ բաժանէ ընդ նա եւ ընդ Կոմագենի Ասորւոց մինչև ցեփրատ։

Ունի եւ ալ լեռինս. Զիգոն-Բասիլիկոն և զՈրոմանդոն. եւ գետս՝ զնոյն լանուն Որոմանդոն և] զՊիլ[ու]ռամիս և զՊառատիս եւ [զՄելաս], զԿիակկաս եւ զԿառոմոսոս, և դրունս երկու ելանելոյ յԱսորւոց»¹։

Սակայն «Աշխարհացոյցի» հեղինակը այս համառոտ տեղեկության մեջ չի նշել Պառատիս գետի որտե՞ղ թափվելը կամ ո՞ր բնակավայրերով անցնելը։ Այդ մասին կարելի է տեղեկություն գտնել Հեթում Պատմիչի հետևյալ տողերում. «Եւ ի հասանել վախճանի թագաւորին Հեթմոյ, առ եզր Պարատիս գետոյ որ կոչի Ակներ...»²։ Նրա «Պատմութիւն Խրոնիկոնին» աշխատությունում ևս այս տեղեկությունը շարադրված է համարյա նույն բովանդակությամբ. «Յայսմ ամի (ՌՄՀ—1270) վախճանեցաւ բարի թագաւորն Հայոց Հեթում յամսեանն Հոկտեմբերի, [ի սահմանս Բարձր Բերդոյ ի գեղն որ կոչի Ակներ, առ եզր Պառատիս գետոյ]»³։ Հեթում Պատմիչի⁴ տված տեղեկությունից պարզվում է, որ Պառատիս (Պարատիս) գետը Փոքր Հայքից հոսելով դեպի Կիլիկիա, անցնում է Կիլիկյան Տավրոսի Բարձրբերդ գավառի սահմանով ու Ակներ գյուղի կողքով։ Միջնադարյան Ակները այժմ կոչվում է Էյներ, և գտնվում է Ադանա քաղաքից 50 կմ հյուսիս։

Սամվել Անեցու պատմությունից հայտնի է, որ Լեոնային Կիլիկիայի նըշանավոր Կրակկա գյուղաքաղաքը ևս գտնվում էր Պառատիս գետի ափին։ Այդ մասին է վկայում Գագիկ II Բագրատունու սպանության հետ առնչվող

1 Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի. Երևան, 1963, էջ 100։ Անանիա Շիրակացի. Մատենագրություն, աշխատ. Ա. Գ. Աբրահամյանի և Գ. Բ. Պետրոսյանի. Երևան, 1979, էջ 285։

2 Սամուէլի քահանայի Անեցոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց. Վաղարշապատ, 1893, էջ 211։ Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., կազմեց Վ. Ա. Հակոբյան. հ. II, Երևան, 1956, էջ 105։ Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), ձեռ. № 1893, էջ 171բ—172ա։

3 Վ. Ա. Հակոբյան. նշվ. աշխ., էջ 75։ ՄՄ, ձեռ. № 1898, էջ 163բ—164ա։

4 Հեթում Պատմիչը տեղ և իշխանն էր Կիլիկիայի Կոռիկոս նավահանգիստ բերդաքաղաքի։ Իսա միևնույն ժամանակ զբաղեցնում էր Կիլիկիայի Հայկական պետության պայլի և գունդստաբլի բարձր պաշտոնները։

Կենդոսկավի բերդի հույն բնակիչներին Կրակկա վերաբնակեցնելու մասին Սամվել Անեցու տված հետևյալ տեղեկությունը. «Թուրքիայան Թորոս I իշխանը «...զբեռդն Կանդոասկաւի քակեաց և զբազմութիւն գանձուցն էառ և զբնակիչսն եբեռ բնակեցոյց առ ափն Պառատիս գետոյ. որ այժմ ներքի Կրակա կոչի»⁵։ Սա աղբյուր է ծառայել Սմբատ սպարապետի համար ու նա ևս իր «Տարեգրքում» գրել է նույն բովանդակությամբ տողեր. «...զբնակիչսն բերդին բնակեցոյց առ ափն գետոյն Պառատիսու, որ այժմ Կրակկա կոչի անուն տեղեացն»⁶։ Մեզ հայտնի է, որ Կրակկա գյուղաքաղաքը ևս գտնվում էր Լեոնային Կիլիկիայում։

Միջին դարերում հայերի Պառատիս կամ Պարատիս անվանած գետը բյուզանդացիների Պարագետիսոս գետն էր։ Հայերեն ժամանակագրություններում Պառատիս անունը գրվել է նաև «Պատառիս» ձևով։ Դա արդյունք է գրիչների կամ արտագրողների սխալի։ Գրականության մեջ ևս «Պատառիս»⁷ ուղղագրությունը տեղանունը տարածվել է անուշադրության պատճառով։ Մխիթար Այրիվանեցու պատմության 1860 թ. հրատարակությունում կարդում ենք. «Այամանաց թագաւորն գետամոյն եղև ի Պատառիս»⁸։ Բոլորին հայտնի է, որ Հոռմեական սրբազան կայսրության գերմանացի արքա Ֆրիդրիխ I Շիկամորուսը (1152—1190 թթ.) խեղդվել է Սելեկիա քաղաքի մոտ, Կալիկադոնոս գետում և ոչ թե Կիլիկիայի Կիդնոս⁹, Պառատիս կամ մի այլ գետում։ Մխիթար Այրիվանեցին շփոթել է Կիլիկիայի Հայկական պետությունում գտնվող Կալիկադոնոս գետի անունը Պառատիսի հետ։ Այստեղ մեզ համար կարևորը ժամանակի ընթացքում Պառատիս տեղանվան «Պատառիս» ձևը ստանալն է։

Վերոհիշյալ վկայություններից պարզվում է, որ Պառատիս գետը Կիլիկիայի տարածքում ծովը թափվող մի գետ էր։ Սակայն Պառատիս անունը Կիլիկիայի ո՞ր գետին էր պատկանել։ Դարերի ընթացքում մոռացության է մատնվել այդ գետի անունը և անորոշ է դրա արդի պատկանելությունը։

Բյուզանդա-արաբական պատերազմների (VII—X դդ.) շրջանում Կիլիկիային տիրած արաբները Նահր Բարադան էին անվանում այնտեղի Կիդնոս գետը։ Դա այժմ կոչվում է Թարսուսայը կամ Բերդանչայը։ Լատիներեն cycdonus նշանակում է «սառը, պաղ, ցուրտ»։ Դրա առաքերեն թարգմանությունն է «բարդան»։ Առաքերը Կիդնոս գետի անունը թարգմանել և հարմարեցրել էին իրենց լեզվին։ Այժմ թուրքերի գործածած Բերդանչայը անունը զալիս է արաբերենից։ Կիլիկիայի հայերը այն անվանում էին «Տարսոյ գետ»։ Ինչպես որ թուրքերը այն անվանում են նաև Թարսուսայը՝ հին Տարսոսն քաղաքի անունով։

Պառատիս գետի անվան հետ հնչյունային նմանություն ունի Զահան գետի վտակներից արգի Պերտիզչայ գետակի անունը։ Դա սկիզբ է առնում Բերդուս բերդի մերձակայքից։ Անունների հնչյունային նմանության պատճառով սխալ եզրակացության է հանգել Մերձավոր Արևելքի երկրների միջին դարերի պատմության և աշխարհագրության խոշոր գիտակ է. Հոնիգմանը։ Նա, բյուզանդացիների Պարագետիսոս գետը նույնացրել է Պերտիզչայ գետակի հետ¹⁰։ Հունարեն «պարագետիսոս» (παραγαίτης) նշանակում է «դրախտի պարտեզ,

⁵ Սամվել Անեցի, էջ 121։

⁶ Սմբատ սպարապետի Տարեգրք. Փարիզ, 1859, էջ 91։ Սմբատ սպարապետի «Տարեգրքի» 1356 թ. Վենետիկի հրատարակությունը չունի այս հատվածը։

⁷ Տե՛ս Սամվել Անեցի, էջ 121-ի տողատակում։ ՄՄ, Վեռ. № 3072, 1484։

⁸ Մխիթարայ Այրիվանեցու Պատմություն Հայոց. լույս ընծայեց՝ Մ. էմին. Մոսկվա, 1860, էջ 65։

⁹ Արդի թուրք պատմաբանները զեպրի վայրը սխալմամբ նշում են Կիդնոս (այժմ Թարսուսչայ) գետը։ Տե՛ս Ortamektep için Tarih II, İstanbul, 1938, s. 125. «Frederik Barbaros ta Tarsus çayında yıkanırken boguldu»։

¹⁰ A. A. Vasiliev, von Ernest Honigmann. Byzance et les Arabes. T. III, Die Ostgrenze des Byzantinschen Reiches. Bruxelles, 1935, քաղաք II։

դրախտ»¹¹ («պատվով շրջապատված, ծառազարդ և բուսականությամբ հարուստ պարտեզ է, ուր արածում էին կենդանիները»); Պերտիզլայ գետակի անունը ոչ մի առնչություն չունի «պարտեզ» բառի հետ, այն գալիս է Բերդուս տեղանունից: Միջին դարերում Բերդուսում էր գտնվում Կիլիկիայի Հայկական պետության կարևոր ամրություններից մեկը՝ Բերդուսի բերդը: Բերդուսի անունով էին կոչվում նաև գավառը և հիշյալ գետակը: Տեղանունը ստեղծվել է Կիլիկիայի երկրամասը Հռոմեական կայսրության տիրապետության տակ եղած ժամանակաշրջանում: Լատիներեն *pertusum* նշանակում է «կիրճ, լեռնանցք, անդր, մուտք, անցնելու համար տեղ»։ Դեռ պահպանվել են *Pertus* անունով վայրեր Իտալիայում¹², Իսպանիայում¹³ և Ֆրանսիայում¹⁴: Բերդուս բերդը և գետակը գտնվում են Նիքատացվոց ետևում և ոչ թե Փոքր Հայքում կամ Կիլիկիայում: Բերդուս բերդը կառուցված էր Զահանի և Աղաթճայի (այժմ Ակսուխ) գետանցքները իրար հետ հաղորդակցության մեջ դնող կիրճի վրա: Պերտիզլայ գետակը ունի մոտավորապես 30 կմ երկարություն և անցնում է Բերդուս բերդի հարավ-արևելյան կողմի լանջերի ստորոտով: Գետակի կազմած հովիտը կոչվում էր «Բերդուս գավառ»: Գետակը սկիզբ է առնում Բերդուս բերդի արևելյան կողմի բլուրներից և հոսում արևելքից դեպի արևմուտք, Ընկուզուտ լեռների հարավային ստորոտով, Զահան գետին է միանում արդի Պերտիզլայ գետաբազալի մոտ: Ուստի, այսպիսի փոքր Պերտիզլայ գետակը չէր կարող լինել Փոքր Հայքից ծնունդ առնելով Միջերկրական ծովը թափվող Պառատիս գետը:

Գուցե է. Հոնիգմանին սխալ ենթադրության է հանգեցրել մի այլ համաձայնության: Այժմ Սեյհան և Զեյհան (Զահան) կոչվող գետերը XIII դարում ծով էին թափվում միացյալ գետաբերանով, այդ պատճառով էլ երբեմն համարվում էին մեկ գետ¹⁵: Այդպիսի դեպքում միայն Պերտիզլայը կարելի է ենթադրել Սեյհանի վտակներից մեկը և Պառատիսը սխալմամբ տեղադրել Պերտիզլայի տեղում:

Պերտիզլայը թյուրիմացաբար Պառատիս գետի անվան հետ նույնացնողներից մեկն էլ Ալիշանն է: Նա, օգտվելով Լրբոյի մեծածավալ աշխատությունից¹⁶, Պառատիս գետի մասին գրել է հետևյալը. «...Բիզանդացի պատմաբանները¹⁷ վկայի լինել սա ընդ մէջ Կոկիսոնի և Մառաշայ»¹⁸: Սակայն այս տեղագրությունը չի համապատասխանում հայ տարեգիրների նկարագրությաններին: Ալիշանի «Բիզանդացի պատմիչը» Կոստանգին Միրանաթին կայսրն է, ով գրել է 875 թ. Վասիլ I կայսեր Արաբական խալիֆայության դեմ կատա-

¹¹ Հն. պարսկ., ղենդ. *pairi—daeza* (Ավեստայում), ասոր. *pardaysa*, բաբել. *pardesu*, եբրայ. *pardes* — այս բոլորը հոմանիշ են, պատով շրջապատված պարտեզի, դրախտային և եղեմական պարտեզի ու սովորական պարտեզի իմաստով, ֆրանս. *paradis* — դրախտ, արքայություն, երկինք, անդլ. *paradise* — դրախտ, գերմ. *paradies* — դրախտ, վերնասրահ, լատին. *paradisus* — մեծ պարտեզ, այգի, եղեմ, դրախտ, դրախտային այգի:

¹² *Petra Pertusa*, Իտալիայում: VI դարի լեռնային բնակավայր, Անկոնա նավահանգիստ-բաղաբից դեպի արևմուտք:

¹³ *Perthus*, *Col de Perthus*, Իսպանական բնակավայր և լեռնանցք Ֆրանսիայի և Իսպանիայի սահմանի վրա: Գտնվում է ֆրանսիական Պերպիյան բաղաբից Իսպանական Ֆիգերաս բնակավայրը տանող տարանցիկ ճանապարհի վրա:

¹⁴ *Pertuis*, լեռնային բնակավայր Ֆրանսիայի հարավում, Վոկլյուզ գավառի հարավային սահմանի վրա է: Դյուրանս գետակի աջ ափին: Գտնվում է գետանցքին հարող կիրճի մեջ, Մարսելից 45 կմ հյուսիս:


¹⁵ Դարերի ընթացքում այդ գետերը գետաբերանի շրջանում մեկ միացել, մեկ բաժանվել են իրարից:

¹⁶ Lebeau. Histoire du Bas-Empire. T. XIII, livr. LXXI, Paris, 1832, p. 290.

¹⁷ Կոստանդին Միրանաթին. թարգմ. Հ. Բարթիկյանի. Երևան, 1970, էջ 76 (Վասիլ I Մակեդոնացու կենսագրությունը, գլ. 48):

¹⁸ Ղ. Ալիշան. Վենետիկ, 1885, էջ 12:

րած հաղթական ռազմարշավի մասին: Վասիլ I-ը Կեսարիայից շարժվելով դեպի Կոկիսոն, Մարաշ և Ազաթճա, գրոհել է այդ բերդաքաղաքները և ավերել շրջակայքը, ապա Արգեռս լեռան մոտով վերադարձել Կեսարիա: Հստ բրնազրի հայերեն թարգմանության, Կեսարիայի և Կոկիսոսի միջև անցել են Սարոս և Օնոպնիկտես գետերը, իսկ Պառատիս գետը չի հիշատակվում: Լրբոյի աշխատության համապատասխան հատվածում չի հիշատակվում Օնոպ-



Պառատիս գետի ավազանը (XI—XIV դդ.)

Պայմանական նշաններ

--- Գետերի արդի հունը ➔ Բերդեր
Քարտեզի հեղինակ՝ Մ. Հ. Ճեզաճիրճյան

նիկտես գետի անունը, բայց դրա փոխառեն Վասիլ կայսեր վերադարձի ճանապարհի մասին գոված է հետևյալը. «...ստիպված եղավ անցնել Պառատիս անունով լայն մի գետ: Նրա անցանելի հունը ծանծաղ է, բայց հատակը լպրծուն և տղմուտ»¹⁹: Մեզ հայտնի չէ, թե Լրբոն որտեղից է գտել Պառատիս գետի մասին այս տեղեկությունը: Սակայն դա ճիշտ է ասված, որովհետև Կոկիսոնից դեպի Կեսարիա տանող ճանապարհը պարտադիր կերպով անցնում էր Պառատիս գետի վրայով: Լրբոյի աշխատությունում ևս Պառատիս գետի վերաբերյալ տեղագրական տվյալներ կամ արդի անվան մասին տեղեկու-

¹⁹ Lebeau. Op. cit.

թյուններ չկան: Կոկիսոնի և Մարաշի միջև գոյություն ունեցող գետի ջրավազանը պատկանում է Զահան գետին և նրա վտակներին: Այդ թվում հիշատակելի է նաև Բերդուսի գետակը (Պերտիզլայ): Իսկ Լեռնային Կիլիկիայում, Կոկիսոնից արևմուտք, գտնվում է արգի Սեյհան գետի վերին հոսանքների ծավալուն ջրավազանը՝ իր վտակներով միասին: Դրանց թվում է նաև Պառատիսը: Հայտնի է, որ է. Հոնիգմանը բազմաթիվ անգամներ գիմել է Ալիշանի պատմաաշխարհագրական տեղեկություններին: Պառատիս գետի մասին Ալիշանի հիշյալ տեղագրումը է. Հոնիգմանը ընդունել է իբր ճիշտ և ինքը ևս կրկնել է նույն սխալը:

Միջնադարյան Պառատիսը պիտի համապատասխաներ Սեյհան գետի վերին հոսանքների ջրավազանի ամենագլխավոր գետին, որը այժմ կոչվում է Զամանտըսու կամ Ենիջե ըրմակ: Բացի այդ, Սեյհան գետի վերին հոսանքներում կան Գյոկսու, Ինդերե, Աղադերե, Կըզըլդերե, Շարդերե և այլ անուններով վտակներ: Լեռնային Կիլիկիայի Ակներ և Կրակկա գյուղերը այժմ գտնվում են Զամանտըսու գետի ափին:

Պառատիս գետի մասին գոյություն ունի փաստացի մի այլ վկայություն, որով հաստատվում է Սեյհան, Զամանտըսու և Պառատիս անունների պատկանելությունը նույն գետի տարբեր հատվածներին: Միջնադարի արաբները, իրենց աշխարհակալական նվաճումներին զուգընթաց, որդեգրել են նաև շատ ճշգրիտ քարտեզներ պատրաստելու գիտությունը: X դարում արաբները Բաբ ալ-Ֆարադիս էին անվանում Լուլուա բերդի հարավային դուռը: Դա բացվում էր դեպի Դարպաս գետակը (այժմ՝ Տարբազսուլու), որը Ցախուտ գետի վերին հոսանքների անունն է: Սեյհան գետի աջակողմյան վտակներից մեկն է Ցախուտը (այժմ՝ Չակդդ): Արաբները ամբողջ Սեյհան գետը համարել են Պառատիս գետ, ապա Դարպասի գետակը և Ցախուտը համարելով Պառատիս գետի վտակներ՝ վերջինիս անունով էլ Բաբ ալ-Ֆարադիս²⁰ են անվանել Լուլուայի դռներից մեկը: Դրա հայերենը կլինի «Դուռն Պառատիսոյ»: Լեռնային Կիլիկիայի ձորերով և լեռներով կտրատված բարդ ռելիեֆը կարելի է ընկալել միայն ճշգրիտ պատրաստված քարտեզներով: Հակառակ դեպքում արաբների համար հնարավոր չէր լինի պատկերացում կազմել Պառատիս գետի և Դարպաս գետակի ջրագրային ճյուղավորման մասին: Այս փաստը ևս ցույց է տալիս, որ միջին դարերում Փոքր Ասիայի գետերից միայն Սեյհանի վերին հոսանքներում կարող էր լինել Պառատիս գետը:

Վերևում բերված ժամանակագրական և տեղագրական տվյալներից երևում է, որ Կիլիկիայի տարբեր դետերը ժամանակի ընթացքում անվանվել են Պարատիսոս, Պառատիս, Պարատիս, Պատարիս, Ֆարադիս, Նահր-Բարադան, Բերդանլայ, Պերտիզլայ. նմանաձայն անուններով այս գետերը զբաղեցնում էին ընդարձակ մի տարածություն: Դրա արևելյան հատվածը, Մարաշ քաղաքի հյուսիսում, ընդգրկում էր Զահանի վտակ Պերտիզլայի ջրավազանը: Իսկ արևմտյան հատվածը տարածվում էր մինչև Իսափրյան Սելեկիա քաղաքը և ընդգրկում էր Կալիկադոնոս գետի ջրավազանի մի մասը: Սրանց միջև ընկած տարածությունում հոսում էին Կիլիկիայի մեծ ու փոքր բազմաթիվ գետերը: Այդ պատճառով Կիլիկիայի մասին տեղեկություններ պարունակող ժամանակագրություններում Պառատիս գետի դիրքը ստեղծել էր աշխարհագրական մի խառնաշփոթություն: XIX—XX դդ. պատմաբանները իրենց աշխատություններում Պառատիս գետի տեղագրության մասին գոհացել են միայն անստույգ ակնարկներ անելով:

Ուսումնասիրություններից պարզվեց, որ հայերը ոչ մի ժամանակ չեն ունեցել «Ծամնդա գետ» աշխարհագրական անունը: Այդ հորինվել է XX դարում. Թուրքերը Պառատիս գետի անունը փոխել են Զամանտըսուի, իսկ վերջինս հա-

²⁰ İslâm Ansiklopedisi. C. 7, sf. 110. İstanbul, 1968—1970. Բյուզանդա-արաբական պատերազմների ընթացքում, 973 թ. Լուլուա բերդի վրա արաբների կատարած հարձակումներից մեկի ժամանակ արաբները հրկիզել են բերդի հիշյալ դուռը և հարակից մասերը:

յերենի թարգմանվելով ստեղծվել է «Մամնդավ գետ»²¹ անունը: Թուրքերը, կրկին փոխելով գետի անունը, այժմ անվանում են այն *Ենիչե* ըրմակ:

Քննարկումից պարզվում է, որ Կիլիկիայի արգի Սեյհան գետի վերին հոսանքներում, արևմտյան հատվածի ամենաերկար վտակ *Ենիչե* ըրմակ կամ *Ջամանտըսու* գետը համապատասխանում է հին և միջին դարերում դրախտային համարվող Պառատիս գետին:

Սեյհան գետը, Պառատիսից (Ջամանտըսու) բացի ունի խոշոր մի այլ վտակ ևս, որը անցյալում կոչվում էր Սարոս (այժմ՝ Գյոկսու) և համարվում էր «եղեմային գետ»: Միջնադարում Կիլիկիայի հայերը Սեյհան գետի ամբողջությամբ, իր բոլոր վտակներով միասին, անվանում էին «ադենաբուլա», ադենաբուլա, իսկ Ադանա քաղաքը՝ ադենական, ադենային: Պատմական նշանակություն ունի նաև Գյոկսու գետի ափի Շար գյուղը, որին հարևան են մեհենական Կոմանա քաղաքի ավերակները: Այդ քաղաքը կոչվում էր Կապադոկիական Կոմանա, Հայկական Կոմանա կամ Ոսկի Կոմանա: Շար գյուղի շրջանում Գյոկսուն կոչվում է Շարդերե: Կիլիկիայի Հայկական պետության ժամանակ (XI—XIV դդ.) «Շղրկայ գետ»²² էր կոչվում արգի Շարդերեն (Գյոկսուն): Հույները Սեյհան գետի սկիզբը միշտ համարել են Սարոսը: Դրա համար էլ ընդհանուր առմամբ գետը անվանել են Սարոս: Իսկ հայերը Սեյհան գետի սկիզբը միշտ համարել են Պառատիս գետը (Ջամանտըսու, *Ենիչե* ըրմակ), որը մյուսի հետ համեմատած ավելի երկար է, և դա ավելի ճիշտ է: XIX դարի մի քանի օտարերկրացի գիտնականներ, հետազոտելով Սեյհան գետի ջրավազանը, հաստատել են Ջամանտըսուի առավելությունը Գյոկսուի նկատմամբ: Այնուհետև Սեյհան գետի համար սկիզբ են ընդունվել Ջամանտըսուի (Պառատիս) ակունքները և ոչ թե Գյոկսուի (Սարոս): Ջամանտըսուի ակունքներից մինչև Միջերկրական ծով գետի երկարությունը 516 կմ է: Խեթերը Գյոկսուն անվանում էին Շամդի (մ. թ. ա. XV—XIII դդ.)²³, Պղսոո լիճնելու պատճառով հույները գետն անվանում էին նաև Փսարոս, որ նշանակում է պորշ: Մ. թ. ա. 401 թ. Քսենոփոնը այդպես է արձանագրել Ադանայից հոսող գետի անունը²⁴: Սակայն գետը չի կորցրել իր անվան հիմնական Սարոս կամ Սարուս ձևը, որը գալիս է հնդերի «շար» (բարել. *Sar*, ասորերեն *Sa-ar*, ասորերեն *Sar*)²⁵ արմատից: Հույները չունեն «շ» բաղաձայնը. այդ պատճառով նույն անունը հունարենում ստացել է սարոս (*σαρος*, լատ. *Sarus*)²⁶ ձևը:

Միջնադարյան Կիլիկիայի հայոց Շղրկա գետի անունը ստեղծվել է արաբերեն «շահր» (քաղաք) և «շուղր» (կիրճ, անցք) բառերի համադրումից: Մոս

21 Թ. ի. Հ ա կ ո Ր Յ ա ն. Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության. Երևան, 1960, 1. 27. Տե՛ս նաև Հայաստանի պատմական աշխարհագրություն. Երևան, 1968, էջ 26, 33 և 355:

22 1303—1304 թթ. Լեոնային Կիլիկիայի Գոնեի և Խաչատրո անապատներում Մարտիրոս վարդապետի ընդօրինակած Աստվածաշնչի հիշատակարանում Շղրկա գետի մասին նշված է հետևյալը. «Գրեցաւ սա ՚ի թուականիս ԶԾԳ (1304), յամսեանն յուլիս, յերկիրս Կիլիկիոյ, մերձ ի բերդս Բարձր, յԱնապատս Խաչատրոյ, ՚ի վերայ դետոյս Շղրկայ, ՚ի քարանձաւս և ՚ի նեղ տեղիս» (Ղ. Ա լ ի շ ա ն. Նշվ. աշխ., էջ 534: ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան. Երևան, 1950, էջ 16—17:

23 Albrecht Goetze. Kizzuwatna and the problem of Hittite geography. New Hawen, 1940, էջ 49—53: Հեղինակը բավականին հաջող տեղագրումներ է կատարել Կիլիկիայի և Խեթական կայսրության երկրի աշխարհագրության հարցերին նվիրված վերջին աշխատությունում: Նա սխալմամբ «Շամրի գետը» նույնացրել է Ենիչե-ըրմակի (Պառատիս) հետ, որը պետք է լիներ Գյոկսուն: Տե՛ս նաև В. Н. Х а ч а т р я н. Восточные провинции Хеттской империи (Вопросы топонимики). Ереван, 1971, էջ 92—93:

24 Ք ս ն ֆ ո թ ն. Անարասիս, թարգմ. Սիմոն Կրկյաշարյանի. Երևան, 1970, գիրք առաջին, IV 1, էջ 17:

25 Հ. Ա ճ ա ո Յ ա ն. Հայերեն արմատական բառարան. հ. III, էջ 501:

26 Նույն տեղում:

անցյալում Շար գյուղը կոչվում էր նաև Շահր: Արաբների և օսմանյան թուրքերի տիրապետության ժամանակ Շար տեղանունը վերաիմաստավորվելով դարձել էր Շահր: Այգտեղից հոսող Շարդերե գետակի մասին հիշատակություն է պարունակում իսթական կայսրության մայրաքաղաք իսթուլաշի պեղումներից հայտնաբերված թրծված կավե սալիկներից մեկը: Վերջինս պարունակում է իսթական արքա Մուվատալուի (մ. թ. ա. 1306—1282 թթ.) և Կիզվատնայի թագավոր Սունաշշուրայի (Շունաշշուրա) միջև մ. թ. ա. 1296 թ. կնքված դաշնագիրը, ուր սեղագրված է երկու պետությունների միջև հաստատված սահմանը. (սյունակ IV, տող 58) «Շիրիզգա քաղաքը²⁷ պատկանում է [խատտի] Արեգին, իսթական քաղաքը²⁸ Շունաշշուրային: Շամրի գետն²⁹ իր սահմանն է: Մեծ արքան պետք չէ անցնի Շամրի գետը Աղանիյա երկրի³⁰ կողմը: Շունաշշուրան պետք չէ անցնի Շամրի գետը իսթական երկրի կողմը: (տող 62)... Զիլաբբունա քաղաքից³¹ սկսած Շամրի գետը կազմում է սահմանը...»³²: սկսած Շամրի գետն իսթական կազմում է Շունաշշուրայի սահմանը...»³²:

Անցյալում Գյուկսուն անվանվել է Սալեպ³³: Սակայն ճիշտ չէր լինի ամբողջ Գյուկսուն այդպես անվանել, քանի որ վերջինիս անունը պատկանում էր միայն Վահկայից քիչ հարավ-արևմուտք, Գյուկսունի աջից միացող Սալամսույու գետակին: Սա իր անունը ստացել է աղղի Սալեմ գյուղի անունից: Սալեմ գյուղի տեղում, ինչպես վերը նշեցինք, եղել է իսթական պետության շրջանի Զիլաբբունա քաղաքը, որի մոտով անցնում էր Կիզվատնայի թագավորության և իսթական կայսրության սահմանը:

Դաշնագրի բովանդակության ուսումնասիրությունից պարզվեց, որ հնադարյան Փոքր Ասիայի Կիզվատնա թագավորությունը գտնվում էր ոչ թե Սև ծովի հարավ-արևելյան կողմում, Պոնտոսում և Պոնտական Կապադովկիայում, ինչպես ենթադրում էին մի շարք հեղինակներ, այլ Կիլիկիայում՝ Կապադովկիայի հարավային մասում, Կոմանա քաղաքով միասին: Կիզվատնայում հիշատակվող երկաթի հանքերը գտնվում էին անմիջապես Լեոնային Կիլիկիայում, Շամրի գետի ջրավազանում:

Այսպիսով, Պառատիս գետի տեղագրության և նրա անվան հետ կապված խնդիրների ուսումնասիրությունից պարզվեց, որ.

1. Միջնադարյան գրավոր աղբյուրներում հիշվող Պառատիս գետը արդի Զամանտրսուն է:

2. Պերտիզլայ գետակի անունը ոչ մի առնչություն չունի «պարտեղ» կամ Պառատիս անվան հետ:

²⁷ Լատ. SIRCIS, հուն. Σιρτζ, այժմ՝ Սարըզ [Գոմեր] գյուղը Տավրոս լեռներից հյուսիս:

²⁸ Կիլիկյան Տավրոս լեռներում: Միջնադարյան հայոց Մուկոն բերդաքաղաքը, այժմ՝ Միլվանկալե գյուղը Կուկլակի կիրճի շրջանում:

²⁹ Հայոց Շղրկա գետ, հուն. Սարոս, այժմ՝ Շարդերե կամ Գյուկսուն:

³⁰ Դաշտային Կիլիկիայում՝ Աղանա քաղաքի անունով: Այժմ՝ Զուկուր-Օվա, Սեյհան և Զեյհան գետերի միջև գտնվող միջագետքում:

³¹ Լեոնային Կիլիկիայում, այժմ՝ Սալեմ գյուղը Ֆեքեյի հարավ-արևմտյան կողմում:

³² Ernst Weidner. Politische Dokumente aus Kleinasien.—Boghaz-Köi Studien. Fasz. 8, 9. Leipzig. 1923. Ա. Պ ա շ ա տ ը յ ա ն. Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն. Երևան, 1933, էջ 506—507:

³³ Ե. Ֆ. Լ ու զ շ ու վ ե յ տ. Թուրքիա, ուսերենից թարգմ. Լ. Նազարյան. Երևան, 1958, էջ 350:

3. «Շամսղաղ գետ» աշխարհագրական անունը ստեղծվել է Ա.Ա. դարում: Դա համապատասխանում է միջնադարյան Պառատիս գետին:

4. Շար, Սարոս, Շամրի և Շոռեա անունները պատկանում են նույն գետին:

5. Վերականգնվում են մ. թ. ա. 1296 թ. հեթական և Կիզիլատնաի սլետոթյունների միջև կնքված դաշնագրում նշված սահմանային տեղանունների արդի անվանումները:

6. Ճշտվում է Սալեպ գետի տեղը:

О МЕСТОПОЛОЖЕНИИ РЕКИ ПАРАТИС

М. Г. ДЖЕВАНРДЖЯН

Р е з ю м е

Статья посвящена проблеме локализации средневековой реки Паратис в Малой Азии. При анализе лингвистических и историко-географических деталей проблемы использовались данные армянских, византийских, арабских и хеттских источников. По этим данным река Паратис тождественна современной Заманты-су, или Енндже-ырмак. Локализуются также некоторые населенные пункты Киликий хеттского периода, уточнена граница между Хеттским царством и Киццуватнион по договору 1296 г. до н. э. и положение рек Салеп и Шхрка Киликийского армянского царства.